ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

<<14>> <<հունվարի>> 2013թ. N 4

Քաջարան

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ՁՄԵՌԱՅԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ- 728 հրամանագրի 1.6 կետի և ՀՀ ԿԳ նախարարի 2012 թվականի մայիսի 25-ի 537-Ն հրամանով հաստատված հանրակրթական ուսումնական հաստատությունների օրինակելի ուսումնական պլանների ընդհանրական պարզաբանումների 17-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով հանրակրթական դպրոցներից ստացված առաջարկությունները.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Մարզի մի շարք դպրոցներում սովորողներին տրված ձմեռային արձակուրդները երկարաձգել մինչև 2013թ. հունվարի 19-ը ներառյալ բաց թողած պարապմունքները շաբաթ օրերին լրացնելու պայմանով. համաձայն հավելվածի:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Է. ՂԱՋԱՐՅԱՆ